

խառնեցաք ի միմեանս, որ մեծացաւ, եւ ի ներքոյ
օթայնն նոր գինետուն շինել տուաք. զի առա-
ջինն փոքր էր, եւ ի հոգոյս լաջեն շուրջըն-
տուաք առնել. եւ ի մէջ պաշտօնային ամարան նստե-
լոյ տեղ եւ այլ պատշաճաւոր շինուածք եղեւ:
Եւ ի ներքոյ Երուսաղէմայ վանքի, աւելի քան
Սուրբ Կարգի մէջ գոյր. վանքի ի ներքոյն
օթայնի ի վերայ գերանոյ շինել արարեալ է. զի
գինեցաւ էւ քանի ի գինեւոր զօր. յանձնեալ է
Վեռնի Առաքելոյ Սուրբ Գեորգի, որոնցմէ Զեքե-
րայ եւ ի վերայ անբաժան շէնքերէն պարտե-
ւեցին. Տէրն հաստատուն պահեցեալ ամեն, (անդ
էջ 184):

Միեւնոյն տարին, Սեպտեմբ.-Հոկտեմբ. հին
Երուսաղէմատան առաջին շէնքը հիմնեց: Միեւնեւ
այն տուն Երուսաղէմի միաբանները իրենց յատուկ
օթեւան մը շունէին Պոլիս, Մայր Եկեղեցւոյն մէջ:
Շղմայակիր այս պէտքը լրացնելու համար՝
Մայր Եկեղեցւոյ մօտիկը, Երուսաղէմի վերջնական
հին տան մը կէսը քակել տուաւ եւ շինեց «Վեռ-
նայնի իրենց արանքի վերայ» եւ վերայ, վերայնոյն
իւրաքանչիւր հանգիստ Գեորգի, որ շատ աշխատեցաւ
եւ յատկացուցաք տեղին իջեւան գալով Երուսա-
ղէմայ միաբանից (անդ էջ 184—185):¹

1 Կ. Պոլսոյ մէջ՝ Երուսաղէմի միաբաններուն բնա-
կութեան յատուկ օթեւանը՝ կոչուած է Երուսաղէմաբան
(= Երուսաղէմի տուն):

Շղմայակիրն շինածը հիմնական Երուսաղէմա-
տունը չէ. այլ ուրիշ տուն մը, որ հաւանաբար Մայր Եկե-
ղեցւոյ ետեւը գտնուած «Տնայնայն իւրեան» անունով ծա-
նօթ շէնքին հետ նոյն էր: Տնայնայն սենեակը վերջէն Կո-
լոտի մատենադարանը պահելու ալ ծառայեց եւ վերջապէս
քակուեցաւ բոլորովին՝ Մայր վարժարանի բակը ընդարձա-
կելու համար:

Իսկ հիմնական Երուսաղէմատունը շինուեցաւ
1763ին, Երուսաղէմի Պատրիարքական Փոխանորդ Պա-
մաճեան Գրիգոր վարդապետի ջանքով: